

ԼՍԵԼԻ՞ Է ՁԱՅՆԸ ԼՈՒՄՆԻ ՎՐԱ

Լսելի՞ է արդյոք ձայնը Լուսնի վրա, հնարավո՞ր է արդյոք, որ Լուսնի վրա տեղի ունեցող ուժեղ պայթյունի ձայնը լսվի Երկրի վրա:

Չայնային ալիքները տարածվում են միայն նյութական միջավայրում: Քանի որ Լուսինը մթնոլորտ չունի, իսկ Լուսնի և Երկրի միջև եղած տարածությունը մոտ է վակուումին, ապա Լուսնից ձայնը չի կարող հասնել Երկրին, որքան էլ որ այն հզոր լինի:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆՔ ԼՍՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՁԱՅՆԸ

Եթե դուք երբևէ ձայնագրել և լսել եք ձեր ձայնը, ապա նկատած կլինեք, որ այն ձեզ անսովոր է թվում, այնինչ ուրիշների ձայնը ձեզ միանգամայն նորմալ է թվում:

Դրա պատճառը հետևյալն է: Ի տարբերություն այլ ձայների՝ սեփական ձայնը մեր ականջներին է հասնում ոչ միայն օդով, այլ նաև գլխի ոսկորներով: Դա հատկապես վերաբերում է ցածր հաճախությամբ ձայնային ալիքներին: Ուրիշները ձեր ձայնը ընկալում են առանց նշված բաղադրիչի: Դուք ձեր ձայնի ձայնագրությունը ընկալում եք այնպես, ինչպես շրջապատողները: